Դաւոյի և Զկանուայ յատկացեալ և գարուն, ամառ, աշուն արօտավայր են իւրեանց անասնոց և ուստի իւրեանց անասնոց համար խոտ կը բերեն։

Մի քանի անգամ ինձ պատահած է այս կողերուն վերայ մեն գալ, մինչև ղլիճ կետուկի գագաթն բարձրանալ՝ տեսած եմ այս կողերու վերայ պատուական մարգագետիններ, գեղեցիկ դիրքով ձորեր, սեպ, հակեալ և զառիվայր կողեր. մեծ և փոքր ժայռեր, խիստ բարձր և ցած գահավէժներ. բլուր և բլրակներ. փոքրիկ սիրուն տափարակներ՝ ձորերու ափերու վերայ ամած փոքրիկ ծառաբոյսեր. սակաւ բայց քաղցրահամ յատակ աղբիւրներ, պատահած եմ և տեսած ոչխարաց հօտեր, գառներու խմբեր, այծերու ջոլիր, սակայն ինձ կը թուիր թէ շունչ ու շշունչ չկայր. չէր լսուիր հովուի սրնդի ձայնը, ոչխարաց բառաչիւնը, գառներու մայիւնը. կարծես հովիւ և անասուն խելք խելաց խառնած՝ դաշն կապած են, լուռ ու մունջ մնալ ո և է շշնկոցով աւազակաց չյայտնուիլ այս երկիւղալի և բազմաթիւ ձորակներէ միոյն մէջ։

Յանկարծ դէմդ մի կողի վերայ տեսար մի խումբ ոչխար, հովիւը մեծ փայտը ձեռին բարձր տեղ մի կանգնած՝ կը դիտէ, աչքերը չորս բացած է, որ մի գուցէ գող մի բարձրահասակ խոտերու միջից սողոսկելով մի քանի ոչխարաց ոտներն կապէ, խոտի մէջ պառկեցնէ, հօտը միւս ձորը անցնելէ յետոյ, արձակէ, տանէ։ Արդէն 8—10 տարեկան քրդ. տղայք ևս այս տեսակ գողութեան վարժ են, շատ անգամ դրացւոյ և ազգականի չեն խնայէր։

Գոմք մէկ ժամ հեռուն հանդէպ Գարսան և 1 3/4 ժամ արևելս հարաւոյ Խասուրայ, Շեռեանայ աջ